ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԱՀԱՅՔ

Նոր դարը հաղորդում է, որ Մոսկուայի Լազարեան ճեմարանին պ. պ. Քանանովն և Տէր Յակովբեանցը նուիրել են առաջինը 12000, իսկ երկրորդը 10000 բուբլի, այն պայմանով, որ առաջինի տոկոսեաք մի Ղազարեցի մանուկ. իսկ երկրորդի տոկոսեաք մի Գօրեցի տղայ ուսում առնեն վերոյիշեալ ճեմարանում մշտապէս։

—

Լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիզում յօգուտ Զէյթունցոց սկսած հանգանակութեան գումարը հասած է մօտ 7000 ի, որ Թիֆլիզաբնակ Հայերի դէպի իրանց թշուառ ազգակիցներն ունեցած ջերմ զգացմանց արտայայտիչն է։

—

Թիֆլիզի ժողովարանում ամսոյս 10 ին յօգուտ Հայուհեաց ընկերութեան տեղի ունեցաւ պարահանդէս և վիճակախաղ, որ բաւական նշանաւոր արդիւնք է տուել ընկերութեան։ Հայուհեաց ընկերութեան արդիւնաւոր գործունէութիւնը յայտնի է ամենքին, ուստի և ցանկալի է, որ Թիֆլիզի հայ հասարակութիւնը չխնայէ նորա միջոցներն ընդարձակել իւր առատ տուրքով։

—

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Կ. Պոլից մեզ գրում են.

Ամենապատիւ Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան, Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքը անցեալ տարւոյ Հոկտեմբեր 23 ին պատրիարքական պաշտօնից հրաժարական տուած լինելով, տակաւին գործը վերջնական որոշում ստացած չէ։ Ամեն. Պատրիարքի հրաժարականը պատճառաբանեալ էր, և պատճառներն էին Հայոց ազգի դարաւոր արտօնութեանց և կրօնական առանձնաշնորհութեանց դէմ տեղի ունեցած ինչ ինչ գործողութիւնները։ Օսմանեան Բարձրագոյն դուռը Ամեն. Պատրիարքի հրաժարականը չընդունուեց, և հրաժարականի պատճառ եղող գործողութեանց քննութիւնը յանձնեց նախ յատուկ յանձնաժողովոյ և յետոյ պետական խորհրդոյն. սակայն մինչև հիմայ այս գործի վերջ առած լինելը չլսուեցաւ։ Ամեն. Պատրիարքն իւր ընթացից համար ազգի կողմանէ համակրական ցոյցեր ընդունեցաւ։

—

«Արևելք» լրագիրը հաղորդումէ, որ Օսմանեան Բարձրագոյն Դրան արդարութեան և կրօնից Վսեմ. Նախարարին կողմանէ ուղարկած է Ամեն. Պատրիարքին, նորընտիր քաղաքական ժողովոյ պաշտօնական հաստատու-

թիւնը։ Այդ հաստատութեան յապաղումը Ամեն. Պատրիարքի հրաժարականին պատճառներից մէկն էր։ Կոստանդնուպոլսոյ ազգային վարչութեան նոր քաղաքական ծողովոյ ատենապետն է Վսեմ. Սիմոն պէյ Մաքսուտ, դերատենապետը՝ Վսեմ. Իլիաս Էֆէնտի Զայեան, ատենադպիր՝ Մեծ. Կարապետ Էֆէնտի Սըվաճեան, դերատենադպիր՝ Մեծ. Յովհաննէս Էֆէնտի Թորոսեան։

—

Մեզ գրում են Կ. Պոլսից—Զմիւռնիոյ Հայոց գլխաւորներից Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեան վախճանել է անցեալ Դեկտեմբերի 22ին։ Հանգուցեալն իւր ազգասիրական մեծագործութիւններով, ազգային բարերարների կարգը դասուած էր, և նորա մահը իբր ազգային սուգ նկատուած է Զմիւռնիայում և Կոստանդնուպոլսում, և նոյն զգացմամբ և ցաւով արձանագրում ենք և մենք այս տխրառիթ լուրը։ Հանգուցեալ նշանաւոր բարերարութիւններն եղած են Զմիւռնիոյ Ս. Լուսաւորչեան հիւանդանոցի վերաշինութիւնը, և պահպանութիւնը, Զմիւռնիոյ Ս. Մեսրոպեան վարժարանի վերաշինութիւնը, Կոստանդնուպոլսոյ Ս. Փրկչեան հիւանդանոցին տուած առատ նպաստները և ուրիշ շատ օգնութիւններ։ Լսում է, որ բարեգործական նպատակների համար կտակներ ևս թողած է հանգուցեալը։

—

«Արևելք» լրագիրը հաղորդում է, որ Տիգրանակերտի վիճակի Հայոց մէջ վերջին ժամանակներն երևցած կրօնափոխական ձգտումը, նոր լուրերին նայելով, շատ թուլացած է, և հեռացողները վերստին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծոցը դառնալ սկսած են։ Արժ. Տ. Ներսէս Ծ. Վարդապետ Խարախանեան, փոխ առաջնորդ տեղւոյն՝ գրեթէ երեք ամիս յառաջ Տիգրանակերտ հասած է, իբրև պատրիարքական տեղապահ։

—

Կ. Պոլսի լրագիրք հաղորդում են, որ—Գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց, առաջնորդն Տրապիզոնի, որ իբրև լիազօր այցելու գնացած էր Մուշ և Ս. Կարապետ, դարձել է իւր վիճակը։

—Կոստանդնուպոլսոյ ազգային Վարչութեան Կրօնական ծողովոյ պատենապետ Ամեն. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, որ անցեալ ամիսներում հիւանդ էր, առողջացած իւր պաշտօնի գլուխն անցած է։

—

«Արևելք» հաղորդում է, որ Կոստանդնուպոլսի ազգային վարչութեան քաղաքական ծողովը Տէրութեան կողմից հաստատուելուց զկնի, Սրբազան Պատրիարքն Կաղանդի օրն Մայր Եկեղեցի իջել, քարոզ խօսել և Երուսաղէմատնում շնորհակալութիւն է ընդունել։ Իսկ Ս. Ծննդեան շնորհաւորութիւնները Պատրիարքարանումն է ընդունել։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. Բարձրապատիւ Մեծ Եպարքոսն յունուարի 9ին իւր մօտն է հրաւիրել ազգային մեծամեծներից վսեմապատիւ Տառեան, Վահան, Սերվիչէն և և Նուրեան էֆէնտիներին և նոցա հետ յանուն Վեհափառ Սուլթանին ազգային գործերի վրայ խորհրդակցել է. Իսկ Յունուարի 16ին էլ Սրբազան Պատրիարքի հետ մի կարևոր տեսակցութիւն է ունեցել.

ԿԱՐՍԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒԸ. Ի 22ԷՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1885 ԱՄԻ ՄԻՆՉ ց15-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1887 ԱՄԻ.

ՄՈՒՏՔ.

1. 1885 ամի Սեպտեմբերի 22ին նախկին երեցփոխաններից ստացուած է $7\,^1/_2$ գրվ. մոմ	34	40
2. Եկեղեցուց դուրս մասնաւոր անձանց վաճառուած է $26\,^3/_4$ գրվ. մոմ	26	85
3. Եկեղեցւոյ մէջ վաճառուած է 5 փութ. 23 գրվ. մոմ . .	732	97
4. Երկու հարիւր ինըսուն եւ վեց մկրտութիւնից լուսգին . .	178	20
5. Քառասուն եւ ինն պսակից լուսգին	57	10
6. Ննջեցեալներից լուսգին	10	50
7. Եկեղեցւոյ գանձանակից գոյացել է արդիւնք . . .	13	18
8. Եկեղեցապատկան տներից վարձ ստացուած է . . .	20	
9. Եկեղեցւոյ վերանորոգութեան համար զանազան անձինքներից նուէր ստացուած է	145	
Բոլոր մուից գումարն է.	1218	20

ԾԱԽՔ.

1. Եկեղեցւոյ ժամակոչին, լուսարարին, տիրացուին տրուած է ռոճիկ	478	50
2. Եկեղեցւոյ համար առնուած զարդերի եւ իրեղէնների վճարուած է	58	29
3. Եկեղեցւոյ եւ եկեղեցապատկան շին. վրայ զանազան ծախքեր է եղել	58	29
4. Առնուած է եկեղեցւոյ համար 6 փութ եւ 7 գրվ. մոմ .	129	10
5. Եկեղեցւոյ մէջ ձրի վառելու համար տրուած է $4\,^1/_2$ գրվ. մոմ.	»	»
Բոլոր ծախուց գումարն է	724	18

Մտից գումարից ծախուց գումարը դուրս գալով մնում է պատրաստի փող ընդ. ամենը . . . . | 494 | 2

Մնացած գումարից Հոգևոր իշխանութեան տնօրէնութեան համաձայն 400 ռուբլին յանձնուած է Կարսի Հայոց եկեղեցական դպրոցների Հոգաբարձութեան, որպէս նպաստ յիշեալ դպրոցների 1886—1887 ուսումնական տարւոյ.

Իսկ մնացեալ 94 ր. 2 կ. եկեղեցապատկան բոլոր կահ կարասիքների, պաշտօնական մատեանների եւ այլ զանազան կարեւոր պաշտօնական թղթերի հետ յանձնեցի պ. պ. հաշուետեսներ Սարգիս Աստուածատրեանցին եւ Խաչատուր Մախաթչեանին, որոնք հոգևոր կառավարութեան հրամանագրութեան համաձայն, ինձ